

ՀԱՆԳԻՍՏ

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԱՄԵՆ. Տ. ՏԻՈՏՈՐՈՍ ՊԱՏՐԻԱՐԺԻՆ ՅՈՒՆԱՑ

1923 - 2000

20 Դեկտեմբեր, Ձորեմշաքքի. Առաւօտեան ժամը 8ին, Ս. Յարութեան Տաճարի մեծ գանգը ընդհատ ընդհատ կը գուժէր Երուսաղէմի Յունաց Պատրիարք Ամեն. Տ. Տիոտորոս Ա.ի մահը որ տեղի ունեցած է Սկորոս լեռան «Հատասա» հիւանդանոցին մէջ, ուր փոխադրուած էր երեք օրեր առաջ:

Հանգուցեալ Պատրիարքը, աւագանի անունով Տաճարնոս Ճորճ Քարիվալիս, ծնած է 1923ին Քիոս կղզին, Յունաստան: 1938ին Երուսաղէմ գալով, կ'աշակեցրտի իրենց դպրեկանքին: Ատեն մը ետք կը մեկնի Յունաստան, հետեւելու համար աստուածաբանական ընթացքի: 1944ին վերստին Երուսաղէմ գալով կը ձեռնադրուի սարկաւագ, իսկ 1947ին՝ կուսակրօն քահանայ: 1957ին Աստուածաբանութեան տօքթորի աստիճանին կ'արժանանայ Աթէնքի համալսարանէն: Յաջորդ տարի կը կարգուի Աւագ Թարգման եւ Նախագահ Կրօնական Դերագոյն Ատենանի: 1962ին ընդունած է եպիսկոպոսական ձեռնադրութիւն, որմէ ետք նշանակուած է Առաջնորդ Ամմանի եւ շրջակայից: Մօտ 18 տարիներ տեւող իր այս պաշտօնավարութեան ընթացքին կատարած է եկեղեցական եւ կրթական շինարար աշխատանքներ: 1981 Փետրուար 16ին, Ս. Սիմոնի կողմէ կ'ընտրուի Պատրիարք Երուսաղէմի եւ կը գահակալէ 19 երկար տարիներ որպէս 97րդ եպիսկոպոսապետը իրենց Աթոռին:

Հանգուցեալ Պատրիարքի մարմինը երեք օրեր շարունակ մնաց Յունաց Վանքի Ս. Կոստանդիանոս եւ Հեղինէ Մայր եկեղեցւոյ մէջ, ուր Հանգստեան պաշտամունքը մատուցուեցաւ Ուրբաթ, 22 Դեկտեմբերի առաւօտուն, որուն ներկայ գտնուեցան Պատրիարք Սրբազան Հայրը ընկերակցութեամբ Տ. Սամուէլ, Տ. Համբարձում, Տ. Գուսան, Տ. Ռազմիկ Վարդապետներու: Ապա յուղարկուորութեան երկար շարանը կանգ առաւ Ս. Յակոբեանց Մայրավանքի աւագ մուտքի առջեւ: Այդ օրն էր որ չորս օրերու անձրեւ տեղի կու տար երկնքի կապշտին եւ արեւին: Մեծ գանգին միագարկ դողմանքին եկան միախառնուելու Միաբանութեան եւ ժողովագաւոր սաներու Հանգստեան մեղեդիները: Հանգստեան Աւետարանը կարդացուեցաւ Սրբազան Պատրիարք Հօր կողմէ: «Հոգեւոց»ի աղօթքէն վերջ թափօրը ուղղուեցաւ դէպի Ձիթենեաց լեռ: Պատրիարք Սրբազան ընկերակցութեամբը Տ. Սամուէլ, Տ. Համբարձում եւ Տ. Ռազմիկ Վարդապետներու, մասնակցեցաւ Ձիթենեաց լեռան Յունաց Գալիլիոյ Վանքի մատուռին մէջ կատարուած Թաղմանական Կարգին, որմէ ետք Պատրիարքներու դամբաններուն շարքին ամփոփուեցաւ դագաղը հանգուցեալին: Հոգեւոր պետք եւ պիտակեան դէմքեր իրենց ցաւակցութիւնը յայտնեցին Մետրոպոլիտեն Տ. Քրոնէ-լիոս Արքեպիսկոպոսին, որ Պատրիարքի վախճանման օրն իսկ Ս. Սիմոնի կողմէ ընտրուած էր Պատրիարքական Տեղապահ:

Տ. Տիոտորոս Պատրիարքի մահով, Յոյն-Օրթոտոքս եկեղեցին կը կորսնցնէ միւս իր քաղմարդիւն մշակներէն, որ եակառակ իր յառաջացած տարիքին եւ վատառողջութեանը, միշտ արթուն մնաց պաշտպանելու Ս. Տեղերը՝ լինելով դիտապետը իր եկեղեցիին:

Թող Տէրը իր յոյսերուն մէջ հանգչեցնէ հոգին բարձրաստիճան իր պաշտօնէին:

Ի.Մ.